

ՄԵԼԻ

Տպարկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խուսափանքի տողաւորին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թատրոնական հաշւետւթիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսից Շահը Անդրկովկասում. Նամակ Երեւանից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱԿԱՆԻՍԱՆ. Այգիները ցրտից ապահովելու փորձեր.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցները յաճախ ուղարկում են մեզ մանրամասն նկարագրութիւններ այն թատրոնական ներկայացումների մասին, որոնք տեղի են ունենում իրանց բնակած տեղերում: Մենք այդ թղթակցութիւնները քաղութային ենք անում եւ հաւորում մեր ընթերցողներին ամփոփ կերպով: Մենք ստիպված ենք լինում բաց թողնել այն բոլոր դատողութիւնները եւ խորհրդածութիւնները, որոնք վերաբերում են պիեսներին բովանդակութեան եւ գերաւորականութեան խաղին: Նրանց տալարութիւնը անկարելի մի բան է, որովհետեւ մի կողմից առաջ կը գան բազմաթիւ կրկնութիւններ, իսկ միւս կողմից նրանք կրում են չափազանց մասնաւոր բնաւորութիւն:

Մենք առաջին տեղի ենք տալիս գաւառական թատրոնական ընդհանրանքին, երբ նրանք որ եւ է պատճառով յատուկ նշանակութիւն են ստանում: Օրինակ, մի քանի տարի սրանից առաջ մենք շատ մեծ տեղ էինք տալիս այն հայկական ներկայացումներին, որոնք տեղի ունեին Բագրատի եւ հասկանալի է թէ ինչու: Այն ժամանակ հայոց դերասանական խմբի լուսաբոյն ոյժերը եւ նրանց կանոնաւոր ներկայացումները կենտրոնացած էին Բագրատի վրայ:

ԲԱՆԱԿԱՆԻՍԱՆ

ԱՅԳԻՆԵՐԸ ՑՐՏԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Վաղարշապատ, ապրիլի 20-ին

Ներկայ ապրիլ ամսի զեռ առաջին օրերից եղանակը յանկարծ փոխվեց եւ մի քանի քաղաքներում ցրտից այն աստիճանի հասաւ, որ մինչեւ ապրիլի 14-ը ամբողջ այգիների գերթէ 3/4 մասը ցրտահար եղաւ: Այսպէս ահա երկրորդ տարին է, որ մի կողմից կարկուտը, միւս կողմից գարնանային ցրտերը ոչնչացնում են մի երկու ժամվայ մէջ Երեւանի, Եջմիածնի ամբողջ գաւառի եւ միւս գաւառների մի մասի այգեւանների յոյսը, այնպէս որ, ինչպէս անցող տարվայ, այնպէս եւ այս տարվայ սպասելի բերքը չի ծածկի եւ չէ կարող ծածկել այգիների վրա արած ծախսերը: Ել չենք խօսում այդ այգիների վրա դրած պետական եւ կալուածատիրական հարկերի մասին:

Որովհետեւ այգեւանները մեծ մասամբ կազմում է ժողովրդի մի որոշ, այն էլ աղքատ դասակարգի ապրուստի միակ միջոցը, ուստի ինքն ըստ ինքեան հասկանալի է դառնում, թէ ինչ մեծ չարք ու պատուհաս են ժողովրդի համար այս բնական աղէտները: Լըբաղարկական տեղեկութիւններից մեզ յայտնի է, որ գետնութիւնը երօպական այգեւանները, բնութեան այդ տակաւի արհաւիրքների դէմ էլ մաքառելու միջոցներ է գտել: Այսպէս, կարկուտներ ամպերի դէմ նա կուտում է մօրտիրոսութիւնը եւ այդպիսով ազատում է բուսականութիւնը կարկուտի աւերակներից: Մեզ նոյնպէս յայտնի է, որ մի քանի տեղերում խաղողի ողկոյթները ազատում են ցրտից միայն ծառերը, Կարկուտներ ամպերը ցրվելու փորձեր, ինչպէս կարողում ենք լրագրիւններում, անվում են մեր երկրի միայն մի մասում—Կախէթում, ու այդ կարելի է լինում մասամբ այն պատճառով,

ուր: Խօսել Բագրատի խմբի եւ թատրոնի մասին նշանակում էր խօսել հայ թատրոնի ընթացիկ վիճակի եւ զարգացման խոշոր երեւոյթներից մէկի մասին: Այն ժամանակները մենք համարեալ թէ լուրժութեամբ էինք անցնում այն պատահական, մասնաւոր ներկայացումները, որոնք տեղի էին ունենում Թիֆլիսում եւ որոնք անմիջական կապ չուներին թատրոնական գործի զարգացման խնդրի հետ:

Դերասանական խմբերը ամեն տարի պտտում են գաւառական քաղաքները եւ տալիս ներկայացումներ: Մի եւ նոյն պիեսը մի եւ նոյն անձը հանդէս է գալիս տասը, քսան տեղ: Անշուշտ, անհնարին մի բան կը լինէր խօսել ամեն անգամ պիեսի եւ դերակատարի արժանաւորութիւնների մասին: Ուրիշ բան է, եթէ որ եւ է տեղ մի յատուկ փորձ արված լինէր շատ զիւրամատչելի ներկայացումներ տալու, կամ դիտողութիւններ արված լինէին գիւղականների եւ քաղաքի հասարակ դասակարգերի վերաբերմանը մասին դէպի թատրոնական գործը եւ նրա աղէտները: Նրանք դարձեալ նոր եւ հետաքրքրական նիւթ կը լինէին թղթակցութիւնների համար:

Մենք յաճախ տալիս ենք մանրամասն տեղեկութիւններ այն ներկայացումների մասին, որոնք կատարվում են ռուսերէն լեզուով Թիֆլիսում: Ներկայացնելով այդ տեղեկութիւնները, մենք դիտաւորութիւն ունենք ծանօթացնել մեր հասարակութիւնը մի կողմից նորագոյն կամ մեզ մօտ անյայտ պիեսների հետ, միւս կողմից այն դերասանական կազմերի հետ, որոնք առկա են տալիս մեզ տեսնել ընդունել տիպիկական կատարումներ եւ վերջապէս ընդարձակելու մեր գիտելութեամբ:

Որ այնտեղ կան խոշոր եւ ինտելիգենտ կալուածատէրեր եւ մասամբ այն պատճառով, որ ընկերական ընդհանուր ոյժերով գործելու ընդունակութիւն է ցոյց տալիս վրաց ժողովուրդը: Բայց փորձեր ցրտի դէմ եղել են եւ լինում են արեւօք, թէ ոչ, մենք չը գիտենք: Մեզանում, չնորհիւ բացակայութեան թէ առաջին եւ թէ երկրորդ հանգամանքների, մինչեւ այժմ կարկուտի դէմ կուրու ոչ մի փորձ չէ եղել, իսկ ինչ վերաբերում է ցրտի դէմ կուրուին՝ առաջին անգամ փորձ արւաւ տեղացի մասնագէտ—գիւնդործ եւ այգեգործ պ. Գեղամ: Նաւասարդեանցը, այդ փորձը թէ եւ անաղղ պէտք է համարել, բայց պ. Նաւասարդեանցը չէ յուսաւատվում եւ բոլորովին հաւատացած է, որ անաղղութիւնը պատահական է եւ կալուածում ունի մի քանի այլ աննպատ հանգամանքներից:

Նա իր փորձը կատարեց երկու այգում, որոնցից մէկը նա կապալով վերցրել է Եջմիածնի վանքից, իսկ միւսը նոյնպէս վերցրել է կապալով տ. Շամբորեանցի, ընկերակցութեամբ երկու ուրիշ անձանց, որոնք պատկանելով նոյնպէս ինտելիգենտ դասակարգին, սիրով կատարում են պ. Նաւասարդեանցի առաջարկութիւնները եւ նոյնպէս համոզված են, որ փորձի անաղղութիւնը, կամ լաւ է ասել՝ անորոշութիւնը յուսաւատեցնող նշանակութիւն չը պէտք է ունենայ: Եջմիածնի այգին գտնվում է ընդհանուր այգիների ներքին մասում եւ ունի ցածր դիրք ու անվիճած է սեւահողի վրա, իսկ երկրորդը, տ. Շամբորեանցի, տնկված է համեմատաբար բարձր դիրքի եւ աւազոտ հողի վրա: Երկու այգիներում էլ նախօրոք պատրաստված էին աթարից եւ անասունների աղբից մի քանի կոյտեր եւ երբ գիւնդները տալուց բնական աստիճանը իջնում էր մինչեւ զրօ, այդ կոյտերը վառվում էին, բայց, տարաբաղդաբար, կոյտերից առաջացած մուկը ըջվելով սարսափելի քամիներից, չէր կենտրոնանում ոչ այդ երկու եւ ոչ հարեւան այգիների մէկն ու մէկում: Եջմիածնի այ-

կան հօրիզոնը, որը շատ նեղ է, եթէ սահմանափակվի հայրենի թատրոնական գրականութեան արդիւններով: Անցեալ տարիները, օրինակ, մենք առանձին ուշադրութեամբ հետեւում էինք Կօրշի, Լիւդվիգովի եւ մանաւանդ Պարզինայի խմբի ներկայացումներին եւ օգտվում էինք դէպքերից խօսելու օրինակելի կատարման, դերերի եւ տիպերի լուրջ ուսումնասիրութեան եւ անսամբլի աջող պահանջութեան խնդրի կարեւորութեան մասին: Այս տարի մենք մանրամասն խօսեցինք Արշէյմանի եւ Վօլգինայի խմբի ընդունելի ներկայացումների մասին, իսկ վերջին օրերը մենք առանձին ուշադրութիւն ենք դարձնում տիկին Պասկալովայի մասնակցութեամբ արվող ներկայացումների վրա:

Մի կողմից ներկայացնել մեր հայրենի բեմի զարգացման բնորոշ երեւոյթները, իսկ միւս կողմից ցոյց տալ ուրիշ աղբերի թատրոնական կիւնքի նորութիւնները—այդ երկու նպատակը կարեւոր ենք համարում: Եւ, արդէն առաջ ունենալով թատրոնական գործը առաջադիմութեան տեսակէտից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԻՑ ԾԱՀԸ ԱՆԴՐԿՈՎԱՍՍՈՒՄ

Մենք հաղորդել էինք տեղեկութիւններ Պարսից Շահի ճանապարհորդութեան մասին մինչեւ Էջմիածնի. այնուհետեւ մեր ստացած եւ տեղական լրագրիւնների հաղորդած տեղեկութիւնները Պարսից Վեհափառ Շահի մասին հետեւեալներն են:

Ապրիլի 26-ին վաղ առաւօտվանից Բագրատի տօնական կերպարանք ստացաւ եւ աղբաւորութիւնը պատրաստվում էր դիմաւորելու Շահին: Առաւօտեան մօտ 9 ժամին սկսեցին գու գրեթէ 3/4 մասը երեք գիշերվայ ցրտերից ոչնչացաւ, իսկ տ. Շամբորեանցի այգու մի մասն 2/3 մասը Պէտք է նկատել նախ, որ մուկը տալու առաջին գիշերը Եջմիածնի այգուց մուկը բաւականաչափ երկար ժամանակ կանգ էր առել հարեւան Սանասարեանցի այգում եւ այդ այգին ազատ էր մնացել ցրտահար լինելուց, իսկ երկու վերջին գիշերները մուկը ոչ մի այգում կանգ չէր առել եւ Սանասարեանցի այգին էլ ուրիշների հետ միասին ցրտին զոհ գնաց, եւ երկրորդ՝ առաջին երկու ցրտից գիշերները տ. Շամբորեանցի այգու մուկը տարածվել էր հարեւան այգիների վրա, որոնք գտնվում են մի եւ նոյն պայմանների մէջ եւ այդ այգիները ամենաշուտին վնաս էին կրել ցրտից, այն ինչ տ. Շամբորեանցին համեմատաբար աւելի վնասվեցին: Առհասարակ տ. Շամբորեանցի եւ նրա հետ մի եւ նոյն պայմանների մէջ գտնվող միւս հարեւան այգիները ընդհանրապէս ցրտից շատ աննշան վնասներ են կրել, այն ինչ միւս այգիները աւելի մեծ վնաս են կրել:

Այս հանգամանքի եւ իր միւս դիտողութիւնների հիման վրա պ. Նաւասարդեանցը զայլ է հետեւեալ եզրակացութեան. 1) առհասարակ չուտով վնասվում են ցրտից այն այգիները եւ այգիների առհասարակ այն մասերը, որոնք գտնվում են ցածր եւ փոս ընկած տեղերում, սեւահողի վրա եւ ուր առհասարակ աւազալիս եւ կրպին մասերը շատ աննշան են, փորված չեն եւ մաքրված չեն կանաչներից եւ 2) ցրտից հեշտութեամբ չեն վնասվում այն այգիները, որոնք գտնվում են առաջին խմբի հակառակ պայմանների մէջ, այն է դիրքը բարձր է, հողը աւազուտ, փորված են եւ ազատ են այլ բուսականութիւններից, Բացի դրա-

հաւաքվել Բագրատ կայարանում գնեւորներ, Բագրատի նաւահանգստի հրամանատարը, փոխնահանգապետ Լիլիեւի, ոստիկանապետը, նոյնպէս եւ Բագրատ քաղաքագլխի պաշտօնակատար Բէլեւովսկի եւ ուղարկվայ անդամները, դուռաձի ձայնաւորները, պատուաւոր քաղաքացիները եւ Բագրատ ապրող պարսկապատկանների պատգամաւորութիւնը եւ այլն: Մուտքը դէպի կայարանի արքայական սենեակները գեղեցիկ զարդարված էր: Կայարանում չարքով կանգնեց պատուաւոր պահակախումբը զրօշակով եւ երաժշտական խմբով, իսկ արքայական սենեակում Շահին սպասում էին քաղաքի ներկայացուցիչները մասնագիտական հոգեւորականների հետ միասին:

Ժամը 9 1/2-ին ժամանեց Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Յրեզէ:

Ժամը 10-ին եւ 15 րօպէին, կանաչով, պարսկական զինադրօշներով եւ դրօշակներով զարդարված Կայսերական արտակարգ դեսպանը Հաջի-Կարու կայարանից ժամանեց նորին մեծութիւն Մուզաֆֆար-Էլիշին Շահի իր ավետայի եւ ուրիշ անձանց ուղեկցութեամբ: Նորին Մեծութեանը դիմաւորեցին գեներալ-լէյտենանտ Յրեզէ, բերդապահ զօրքի հրամանատարը, փոխնահանգապետը, պարսկական պատգամաւորութիւնների ներկայացուցիչները եւ ուրիշները: Երաժշտական խումբը նուազեց պարսկական օրններով: Ընդունելով պատուաւոր բապօրտ, Շահը ողջունեց դիմաւորողներին եւ պատուաւոր պահակախմբին, որը երբեք չուրայով պատմականեց Շահի ողջոյնին, որից յետոյ Շահը անցաւ պատուաւոր պահակախմբի առջեւից: Ապա Շահը մտաւ արքայական սենեակները, ուր դիմաւորեցին նրան Բագրատի քաղաքագլխի պաշտօնակատարը եւ քաղաքի ներկայացուցիչները հոգեւորականների հետ միասին: Այդտեղ քաղաքագլխի պաշտո-

նից պ. Նաւասարդեանցը, նկատելով, որ կուտարկների (թփերի) ներքին մասն է առաւելապէս ցրտահար եղել, այսինքն այն մասը, որ հողին մօտ է, գտնվում է, որ մինչեւ երեք աստիճան ցրտին դիմանալ կարող են այն այգիները, որոնց ողկոյթները բարձրացված կը լինեն սարունների վրա, ինչպէս Կախէթում: Են կամ գոնէ խմբաված կը լինեն էտեղուց յետոյ իսկոյն:

Ընդունելով, որ պ. Սանասարեանի այգին ցրտի առաջին գիշերը կարող էր աղաւթված լինել ցրտից միմիայն այնտեղ ժողովված մի չնորհիւ եւ որ տ. Շամբորեանցի այգին վերջին ամիսաբարձր ցրտի ժամանակ (30 ցածր զրօից) համեմատաբար աւելի դիմացաւ ցրտին քան միւսները, պ. Նաւասարդեանցը կարծում է, որ մուկը անշուշտ կուենար իր բարեբար աղբացութիւնը, եթէ երկու աստիճան տաք եղած ժամանակ կոյտերը վնասված լինէին, եթէ քաղաքային ցրտից չը լինէին եւ մանաւանդ եթէ բոլոր այգիներում միանուազ այդ փորձը կատարվէր, ի հարկէ հիւստ մարդկանց հսկողութեան տակ: Այս դէպքում ինչ ասել կուզի, որ բոլոր այգիները թաղված կը լինէին ծխի հաստ շերտի տակ եւ ցրտը օդը չէր կարող թափանցել այդ շերտը, իսկ հողի տաքութիւնը հեշտութեամբ չէր կարող անհետանալ ներքեւից: Այդ միջոցով կուել ցրտի դէմ, նոյն իսկ ամբողջ ապրիլ ամսի ընթացքում, շատ աննշան ծախս կը պահանջէր այգեւաններից, եթէ միայն ի հարկէ բոլոր այգեւանները համեմատաբար կատարեին այդ փորձը: Օրինակ, պ. Նաւասարդեանցը, տ. Շամբորեանի այգում, որ 7 դեպեմբեր տարածութիւն ունի, ծախսել է ընդամենը 10 ռուբլի, երեք գիշեր վառելով եւ նիւթերից զեռ մնացել է այնքան, որ կարող է բաւականութեամբ տալ երկու անգամ վառելու: Ցանկալի է, որ մասնագէտները եւ փորձաւոր մարդիկ յայտնէին լրագրութեան միջոցով իրանց կարծիքը եւ անձնական դիտողութիւնները:

Մ. Տէր-Պետրոսեանց

ամբարները, քիչ ամբարներ են անասունները եւ թաղանթները է տան բոլոր հարուստ սարք ու կարգը եւ գրադարանը կարուածատէր Դու- խանիսկայի Օսմանով կարուածքում գիւղա- ցիները, թաղանթով բոլոր շարժական կա- քերը, քանդակներն տան գերանները եւ տա- րան իրանց հետ Ապրիլի մէկի իրիկնադէմին կողոպտողները խուճը մտնելու էր Վալիի քաղաքին, ապրիլի երկուսին այդ քաղաքի փո- ղոցներում երեւոյցներ գիւղացիներին առաջապան խմբերը, որոնք գնում էին կողոպտելու, բայց, նախագահեալ անդ հասնելուց յետոյ ամսի երկուսի երկուցեան կարգը վերահաստատուեց եւ անկարգութիւններ անողները պատժուեցան։ Սրանով վերջացան անկարգութիւնները Վալիի գաւառում, ընդամենը այդ գաւառում կողոպտ- ված են 25 կարուածատիւական կարուածքներ, մոտաւորապէս ամբարն կողոպտողներ էլ զօրքի միջոցով չեն թող տուել, որ կատարվեն Բացի դրանից, Վալիի գաւառի սահմանակից Բոգո- ղուլովի գաւառում կողոպտված են երկու կարուածքներ, որոնք գնում են Բնադիւլի գիւղի եւ Բազադաւանի ազարակի մօտ, իսկ Միւրիւլի ազարակը ենթարկվեց յարձակման, բայց ժամանակին ազատվեց։ Ուրիւլի նահան- գապետի եռանգուն գործունէութիւնը եւ նրա յայտարարելը ժողովրդին, թէ թաղանթ իրերը յօժարակամ վերադարձողներին վիճակը կը թե- թեւագնայի, հարկադրեցին կողոպտողներին մէջ մասնակցող գիւղացիներին խելքի գալ եւ ան- կարգութիւնները դադարեցնելու հետեւած օրե- րում գիւղացիները սկսեցին ներկայացնել ի- նական կառավարութիւններին, շնամբանքներն վերադարձնելու համար, կողոպտած գոյքը եւ զգլման թղթեր տուին կազմելով համախօսա- կաններ, Հէնց որ կողոպտողները սկսեցին Ոլո- տավայի, ինչպէս նաեւ Ուրիւլի նահանգնե- րում, իսկոյն անկարգութիւններին տեղը հա- սան դատաւտանական իշխանութեան ներկա- յացողները եւ սկսեցին նախնական ըննու- թիւներ կատարել։ Մի եւ նոյն ժամանակ սկսեցին ըննութիւններ ժամադրմանը օֆի- ցիւներին ձեռքով եւ այդ ըննութիւններով պարզվել է, որ Ոլոտավայի եւ Կոստանտինո- վոպի գաւառների սահմանակից մասերում, ուր գիւղացիներն անտեսական դրութիւնը, որոնք վերջին տարիները մի քանի անգամ ան- բերրութեան զոհ դարձան, կատարելապէս գոհացուցիչ չէ, — բուն գրեց իր համար հակա- կառավարական քրօյւնները եւ հրատարակու- թիւնների պրօպագանդան մօլօրօսական լեզ- ւով։ Այդ հրատարակութիւններին մէջ գիւղա- կան ազգաբնակչութիւնը հրաւիրվում էր ապս- տամբվել իշխանութիւնների դէմ եւ իրանց ձեռքը գցել կարուածատներին գոյքերը վերո- յիշեալ վրա տնհրաժեշտ է աւելացնել, որ ճիշդ չեն հասարակութեան մէջ տարածված այն լու- րերը, որ իր թէ կան անձինք, որոնց վրա գիւղացիները բռնութիւններ են կատարել, նոյնպէս թէ եղել են գիւղացիներ, որոնց բանտարկել են իշխանութիւնները։ Վերջին տե- սակ լուրերի տարածման առիթ տուել է ակ- ներեւ այն հանգամանքը, որ կողոպտողները դադարեցնելու համար իշխանութիւնները ստիպ- ված էին մարմնական պատժի ենթարկել ապս- տամբութեան պարագլուխներին եւ նրա աւելի յաճառ մասնակցողներին։ Այդ պատժները, պատշաճաւոր ներգործութիւն անելով գիւղա- ցիներին վրա, վերացրեց աւելի խիստ միջոցներ ձեռք անելու անհրաժեշտութիւնը, նման այն միջոցների, որոնք ստիպված եղան դիմել Կո- լալէվի գիւղում Անկարգութիւնները ճնշելու ժամանակ կողոպտողներին առանձին խմբերին ղեկավարող անձինք եւ վերջինների չլինելից ամենից աւելի յանցաւորները բռնվեցին, նոյն- պէս կայանաւորված են եւ մի քանի անձինք գիւղացիների միջեւ յանցաւոր պրօպագանդա- ին մասնակցողներին թիւից։ Ներկայումս հասա- րակական հանգստութիւնը Ոլոտավայի եւ Ուր- ևլի նահանգներում վերականգնված է։ Պէտք է կարծել, որ այդ տեղերում ոստիկանական պաշտ- պան ոյժերի զօրեղացնելու ձեռք առած միջոց- ները կապահովեն այնտեղ կարգի պահպանումը այսուհետեւ եւս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նշանակված է փորձական բժշկականութեան ինստիտուտի ղեկավար Լաւիանով ժողովրդական լուսաւորութեան միջնորդի օգնական։

ԲԱՅՈՒ. Ժամը մէկին Շահը իր սպիտակով արքայական արտակարգ գնացքով մեկնեց Բու- տով, ուղեւորվելով արտասահման։

ԲԱՅՈՒ. Շահին ճանապարհ գցեցին մեծ հանգուտի Շահի հետ ճանապարհ ընկան գե- ներալ-էյտեման Ֆրեդէ եւ Նորին Մեծու-

թեան սպիտակի ղեկավար-մայօր Նիկոլայով- վերջինս նշանակված է ուղեկցելու Շահին մինչեւ արտասահման։

ՄՕՍԿՎԱ. Ապրիլի 28-ին տեղի ունեցաւ սա- նատօրիա կազմակերպելու հակամած ընկերու- թեան ժողովը Էսէնտուկիում։ Վճռված է սա- նատօրիա բանալ յունիսին 70 հիւանդների հա- մար լոյսով եւ օդով բժշկելու նպատակով։

ՄՕՍԿՎԱ. Ապրիլի 28-ին սկսեց իր դորու- նէութիւնը բժշկական-սանիտարական կազմա- կերպութիւնների XV համաժողովը։

ՀՕՆԿՕԳ. Ապստամբութիւնը կլանգ-Սիւում թուլանում է։ Աստամբները ջարդ կերան մի քանի կռիւներում։

ՊԱՐԻՉ. Յայտնի են 25 կրկնադուէրկու- թիւնները հետեւանքները, ընտրված են մի- նիստութեան Բ9 կողմակիցներ եւ նրա 16 հակառակորդներ։

ՊԱՐԻՉ. Այժմում կրկնադուէրկութեան ենթարկված բոլոր սէմիտները չեն ընտրված։ Երեկոյան տեղի ունեցաւ կռիւ «Libre Pa- role» լրագրի խմբագրատան առջեւ։ Ցոյց ա- նողներին ցրվեցին ոչ առանց դժուարութեան։

ՊԱՐԻՉ. Մարտիւմ ընտրված է նախկին պատգամաւոր Բիւսսոն, Վիլիմիւր-Լուսմ- ժողովրդական լուսաւորութեան միջնորդ Լէյդ։

ՊԱՐԻՉ. Երեկոյան խառնակութիւն ընկաւ ընտրութիւնների շնութեան մէջ։ Ժօրժ Տիւրօ, նացիօնալիստների թեկնածուն, եւ մէկ ան- յայտ մարդ իրաւորված են, ոստիկանական կօմիսարին հարուածներով դիմաւորեցին։ Ու- տիկանութիւնը վերականգնեց հանգստութիւնը։

ՊԱՐԻՉ. Ընտրութիւններ Պարիզում։ Միլի- րան ընտրվեց նացիօնալիստ Պէլէյի փոխարէն, սօցիալիստ Պիւլ, մինիստրութեան կողմակից, ընտրվեց նացիօնալիստ Լօսսէի դէմ։

ՊԱՐԻՉ. Նացիօնալիստ Կուշի ընտրվեց Ալ- լէմանի դէմ, որը սօցիալիստ է եւ մինիստրու- թեան կողմակից։ Լիւսսէն ընտրվեց նախկին պատգամաւոր Ֆլէրի-Բօլարէն, մինիստրու- թեան հակառակորդ։

ՊԱՐԻՉ. Ընտրված են Լէպլէրտէ, Կլուսիէ եւ Մէսսիֆ, նացիօնալիստներ, եւ Բիւսսոն, Պասկալ, Գրուսսէ, արմատական-սօցիալիստ- ներ եւ մինիստրութեան կողմակիցներ։ Լիւ- լից տեղեկութիւն է ստացված նորեւ ընտր- ված Լօրտիօ յանկարծամահ լինելու մասին որը մինիստրութեան հակառակորդ էր։

ՊԱՐԻՉ. Բուլվարների վրա մեծ կենդանու- թիւն է տիրում։ Ոչինչ ինցիդէնտներ տեղի չունեցան։

ՊԱՐԻՉ. Ընտրվեց Գէյս, նախկին մինիստր, Լազէր, նացիօնալիստ, սեւազաւ։

ՊԱՐԻՉ. Հանգստութիւն է տիրում լուր է պատում Պասկալ Գրուսսէի յանկարծամահ լի- նելու մասին։ Գաւառում սեւազան նախկին մինիստր Կրիստօֆլ եւ Բէյմակ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԻՔԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԷ ԵՒ ԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԵՐԱՄԻՍԵՐՄ

Խմամբով պահված՝ դեռ եւս կան վաճառման համար հետեւեալ երեք յայտնի ֆիրմաների՝ «Յ. Բէրթէ եւ ընկ», «Նըր. Պապարդի» եւ «Ա. Էքօնօմիդի», հարցանել թիֆլիսում՝ Դօր- ցօվեան փողոցում, Վրաց Ազնուականութեան Գարդնաւարայի № 127 գրասենեակում 2—2

Ա. Ս. Ա. Մ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ

Կ. ԿԵՕՆՃԵԱՆ

Փոխադրվել է Երեւանի հրապարակ, տուն Գուրգենովի (Սօլօյակայա փողոցի անկիւն)։ Ընդունում է հիւանդներին առաւօտեան 8—2, երեկոյան 5—8 ժամին։

9—25

Լոյս տեսաւ

ՅԱՌԻՍ

Ողբերգութիւն Գ Ե Օ Թ է Ի

առաջին մասը. թարգմանեց գերմաներէնից ԳԻՌԳ ԲԱՐԻՍԻՆԴԱՐԵԱՆՑ,

հեղինակի պատկերով եւ կարեւոր ծանօթու- թիւններով Շեքլ հրատարակութիւն

Գին է 2 ռուբլի

Վաճառվում է Կենտրոնական գրավաճառա- նոցում եւ թարգմանչի մօտ, Երեւանի Կա- յա փողոց, № 46։

6—5

Քուրաչիսի քաղաքային ջրանցքի եւ էլեկտրական տրամ- վայի ընկերութիւնների վարչութիւնը,

ի նկատի ունենալով, որ համարում է պայմանաւոր (ներկայ տարվայ մայիսի 1-ին), երբ պէտք է մտցնել ընկերութեան 1 եւ 2 սերանների անդորրագրերի նախնական վճարները, արանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ հերթական վճարները կընդունվեն Քուրաչիսում, Ընկերու- թեան գրասենեակում, նոյնպէս եւ Քուրաչիսի Փոխադարձ Կրէդիտի Ընկե- րութեան մէջ եւ Թիֆլիսում—Գիւղատնտեսական փոխադարձ Կրէդիտի Ընկե- րութեան մէջ։ Ընկերութեան իսկական եւ սկզբնական (111 սերայի) փայական անդորրա- գրերը կարելի է ստանալ Քուրաչիսում—1) Ընկերութեան Գրասենեակում, 2) Փոխադարձ Կրէ- դիտի Ընկերութեան Վարչութեան մէջ, 3) Միխայիլովի Ազնուական Կարուածական Բանկի կասսիի մօտ եւ 4) Մարգանէցարդիւնաբերողների Համաժողովի Խորհրդի քարտուղար Ա. Տ. Նանէլչիլիի մօտ. Թիֆլիսում—1) Գիւղատնտեսական Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ եւ 2) Ընկերութեան Վարչութեան անդամների՝ իշխան Բ. Տ. Ամիրջիւրիի, Ա. Ա. Բաբուլի, եւ իշխան Գ. Ն. Դիսասմիճէի մօտ. Բաթումում—Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ. Փոթիում—Փոխադարձ Կրէդիտի Վարչութեան մէջ եւ 2) Խառնուրդում։ Մարգանէցարդիւնաբերական Փոխադարձ Կրէդիտի Վարչութեան մէջ։

2—3

ՀԱՐԱՆԱՅԻՆ ԳԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳԱՐՍԻՅ ԿՈՅԻ

ՁԷՅԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնված ԲՈՒՇԻՐՈՒՄ 25 տարեց ի վեր հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարիզի ծոցի առեւտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի ն. անաւոր կենտ- րոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխա- րում Եւրօպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրօպա, գիրաւատնչելի պայմաններով։ Հասցէն. Zeutoro vbo. Buchire Persiaw-Gnej.

2—100

— Говорю тебе, приятель, по секрету: поку- най сапожный кремь „Гелиосъ“ фа- брики Кёлера. Он втрое дешевле загра- ничного, а обувь отды- ваешь, пожалуй, еще лучше. Я поку ставлю въ счетъ Остаётся въ экono- Смотри-же, помни: „Гелиосъ“ фабрики Кёлера! ПРОДАЖА ВЕЗДѢ ВЪ ЛУЧШИХЪ МАГАЗИНАХЪ.

ԳՈՒՏՏԵՆԻԵՐԻ ԳՐԱՆԵԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

«Աղագրական հանգէս», պատկերազարդ, VII եւ VIII դրերը միասին—3 ռ. Հէմիլեան ազգաբնական ժողովածու, ժողովրդական վէպ եւ հէքիաթ, Հայկունու—1 ռ. 25 կ. «Ներքերգութիւն յօրսա Թանկալ Թաղապետից», Մ. Թաղապետից—40 կ. «Ներքերգութիւն հոգեւորական վարուց Յովսէփի ողբոյ թագաւորին հնդկաց», Յովսէփի կրանաւոր—70 կ.

«Արարողութիւն եւ մեկնութիւն խորհրդի սուրբ պատարագի Հայաստանեայց եկեղեցւոյ», Ա. քահ. Բազադաւան—50 կ.

«Բացատրութիւն Մատթէոսի աւետարանի», Վ. քահ. Շահունեան—1 ռ. 20 կ.

«Պատմութիւն Նոր-Ջուղայի», ալի. Տէր-Յովհաննիսեանի 2 հատոր—2 ռ.

«Գերմանական հայ ուսանողութիւնը», Գ. Մէլիք-Կարապետեանի—20 կ.

«Վերաբերական հիւանդութիւն եւ օպերացիա», բժ. Բուզուզեանի—5 կ.

«Դաստիարակութիւն եւ ժառանգութիւն», Գիւլեօյի, թարգման. Ս. Մանգինեանի—60 կ.

«Ներքերգութիւն հայոց», Գաբրիէլ Պատկանեանի—60 կ.

«Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկա-Հայաստանի համար», Գ. Մէլիք-Կարա- փետեանի—35 կ.

«Գոհարներ Գրիստոսի քարոզութիւններից», Ա. Տէր-Միքեյեանի 20 կ.

«Տաղեր, խաղեր, ժողովրդական երգեր եւ պարեր», Ա. Միլիթարեանի—60 կ.

«Փարաբի քարոզներ», թարգմանութիւն Ս. Մանգինեանի—1 ռ.

«Ներքերգութեան անհրաժեշտ գիտելիքներ», ժողովից Գ. Ղ.—50 կ.

«Բազադաւան կանոնադրութիւն Բարձրագոյն հաստատած—40 կ.

«Կենսիկ զարդեր», վէպ երիտասարդների համար, թարգմ. Գ. քահ. Աղանեանի—1 ռ.

«Պատկերազարդ պոէմներ խորանարդների վրա—1 ռ.

«Շամախու աղէտը», ժողովածու—20 կ.

«Գերմանական կամ պարսկական», նոր ազգագրութիւն—5 կ.

«Լալուարի որս», պօէմ Վ. Միլիթարեանի—40 կ.

«Հոյսիական աստուածաբանութիւն» Մ. եպիսկ. Մուրադեանի—1 ռ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустьян. Лорис- Меликовская ул. № 11.

3—3

ԹԻՖԼԻՍԻ ԸՈՒԵԻՏՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԵՆԸ

Գտնվում է ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ. Ուսումնարանը հիմնված է Թիֆլիսի վաճառականական դասակարգից, դասընթացը եւսման է։ Առաջին դասարանը ընդունվում են առանց ըննութեան քաղաքային ուսումնարաններում աւարած աշակերտները (1872 թ. կանոնադրութեան համաձայն)։ Ուսման վարձը տարեկան 80 ռուբլի է։

Դասընթացը աւարտողների իրաւունքները.—անձնական պատուաւոր քաղաքացու. կողմն հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ։ Պետական ծառայու- թեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունք, առանց ըննութեան Զի- նուորագրութեան մէջ—երկրորդ կարգի արտօնութիւններ։

Ուսումնարանը կը բացվի 1902 թ. 1 սեպտեմբերի 17-ին։ Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 18-ին։ Ուսումնարանի ընկալանքը—Նիկոլայեւսկայա հրապարակ, № 23, տուն Զաւրիկի։

Խմբիւրդները.—մտորկական, կոչման եւ ծաղկի պատուաստման վկայականների հետ միա- սին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչեւ օգոստոսի 31-ը։

Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական զարդի զի- նկետորը։

5—7

„Փ. Ն. Փ Ր Ի Դ Օ Ն Ե Ա Ն“

ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ԵՕԿՕԼԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները ալ խանցան— Կովկասում կօնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱՐ-ԼՈՒՈՒՆԻ, Կարամէլ Վիթիլի-ԹԵԱՅԱՆ եւ առհասա- րակ բարձր յատկութեան կարամէլներ մրցեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պալլադիայա փողոց, սեփական տուն Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութիւնը № 772։

40—100

(հ. կ.)